



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ FOOTBALL FEDERATION OF ARMENIA

03.03.23թ.

Ֆ/1-026

ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավար
Պարոն՝ Ասլան Ավետիսյանին

Հարգելի պարոն Ավետիսյան,

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) (բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, հաշվեհամար՝ 1570059720290300) և ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքի միջև 2019 թվականի մայիսի 23-ին կնքված պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ ՀՖՖ-ն պարտավորվել է բարեգործական նպատակներով ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ռ. Վարդանյան 23/2 հասցեի տարածքում կառուցել արհեստական խոտածածկով, 22 մետր լայնությամբ և 42 մետր երկարությամբ ֆուտբոլի խաղադաշտ:

Մասնավորապես, ըստ նշված կետի՝ ՀՖՖ կողմից բարեգործական նպատակներով իրականացված խաղադաշտի կառուցման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 17,030.144 (տասնյոթ միլիոն երեսուն հազար հարյուր քառասուն չորս) ՀՀ դրամ, որը ներառում է խաղադաշտի շինարարության արժեքը 13,242,894 (տասներեք միլիոն երկու հարյուր քառասուն երկու հազար ութ հարյուր ինսուն չորս) ՀՀ դրամ, խաղադաշտի երկայնքով կառուցված ցանկապատի արժեքը՝ 3,227,250 (երեք միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, շինարարության տեխնիկական հսկողության արժեքը 260,000 (երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ և տեղադրված դապասների արժեքը 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Մինևույն կետի համաձայն՝ Արարատի համայնքը պարտավորվել է համաֆինանսավորել ֆուտբոլի խաղադաշտի ամբողջ երկայնքով երկայնքային ցանկապատի կառուցումը՝ փոխանցելով անհրաժեշտ գումարը՝ 3,227,250 (երեք միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ըստ ՀՖՖ-ի տրամադրած գծագրի և նախահաշվի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խաղադաշտի կառուցումից և հանձնումից հետո մինչ օրս նշված գումարը դեռևս չի փոխանցվել՝ խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում ապահովել վերոնշյալ պարտավորության պատշաճ իրականացումը:

Հարգանքով՝

Արմեն Մելիքբեկյան

ՀՖՖ նախագահ

